Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017 թ.
հոկտեմբերի 26-ի նիստի N 45
արձանագրային որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության համակարգերի 2018 թվականի նախապատրաստման հիմնական խնդիրներն են՝

1) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության իրականացումը.

2) գիտելիքների, մասնագիտական ունակությունների և հմտությունների կատարելագործումն ու կարողությունների զարգացումն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության բնագավառներում.

3) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում կապի ու ազդարարման համակարգի զարգացումը.

4) արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների ուսումնասիրությունը և արտակարգ իրավիճակների կանխման ու հետևանքների վերացման միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.

5) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, քաղաքացիական պաշտպանության, տեխնիկական անվտանգության և սեյսմիկ պաշտպանության բնագավառներում միջազգային փորձի ուսումնասիրությունն ու համագործակցության ընդլայնումը.

6) տարածքային պաշտպանության համակարգի ձևավորմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

7) բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման նպատակով տրանսպորտային միջոցների ապահովման նախապատրաստական աշխատանքների իրականացում:

2. Ըստ բնագավառների 2018 թվականի հիմնական խնդիրներն են՝

1) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում՝

ա. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների ուժերի և միջոցների պատրաստականության ապահովումն արտակարգ իրավիճակներին արձագանքելու համար.

բ. մարդուն հրատապ օգնության ցուցաբերման համապետական համակարգի ներդաշնակ և հուսալի աշխատանքի կազմակերպումը.

2) քաղաքացիական պաշտպանության բնագավառում՝

ա. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների կողմից քաղաքացիական պաշտպանության պլանների և տարահանման պլանների ճշգրտումը (մշակումը).

բ. Հայաստանի Հանրապետության տարածքում առկա պաշտպանական կառույցների ցանկի ճշգրտումը, հնարավորության դեպքում դրանց

վերանորոգման աշխատանքների իրականացումը և համապատասխան գույքով ու տեխնիկական սարքավորումներով կահավորումը.

գ. Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների բնակչության պատսպարման նպատակով համապատասխան շինությունները թաքստոցների ձևափոխման և նորերի կառուցման պլանավորումը.

դ. տնտեսության օբյեկտների կայուն գործունեության ապահովման գործընթացների կազմակերպումն ու իրականացումը.

3) հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում՝

ա. հրդեհների և դրանց հետևանքով հնարավոր մարդկային զոհերի թվի նվազեցմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացումը, հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների իրականացման կարողությունների զարգացումը.

բ. հրդեհային անվտանգության ապահովման հարցերի ուղղությամբ, ըստ անհրաժեշտության՝ նորմատիվ-իրավական ակտերի մշակման և լրամշակման աշխատանքների իրականացումը.

4) ջրային տարածքներում (լճերում, գետերում, ջրամբարներում, լողավազաններում) մարդկանց անվտանգության ապահովման բնագավառում՝

ա. ջրային տարածքներում մարդկանց անվտանգության ապահովման ուղղությամբ հսկողության արդյունավետության բարձրացումը.

բ. ջրային տարածքներում մարդկանց անվտանգության ապահովման հարցերի ուղղությամբ նորմատիվ-իրավական բազայի ստեղծումը և զարգացումը.

5) լեռներում և հանքախորշերում աշխատանքներ իրականացնող մարդկանց անվտանգության ապահովման բնագավառում՝ լեռներում ու հանքախորշերում արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացումը:

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման հանրապետական մարմինների՝ ըստ գերատեսչական ոլորտի, նախապատրաստման հիմնական ցուցումներն են՝

1) մինչև 2018 թվականի մայիսի 20-ը՝ ուժեղ երկրաշարժի դեպքում գերատսչության գործողությունների պլանի ճշգրտումը.

2) ազդարարման համակարգի հնարավորությունների ընդլայնումը.

3) արտակարգ իրավիճակներում բնակչությանը վարքագծի կանոնների ուսուցումը.

4) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում պատրաստմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

5) աջակցությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանների ներդրման աշխատանքներին:

4. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման տարածքային մարմինների նախապատրաստման հիմնական ցուցումներն են՝

1) մինչև 2018 թվականի մայիսի 20-ը՝ ուժեղ երկրաշարժի դեպքում մարզի գործողությունների պլանի ճշգրտումը.

2) մարզի տարածքում հաշվառած հակաճառագայթային թաքստոցների և առկա պաշտպանական կառույցների ցանկի ճշգրտումը.

3) մարզի բնակչության ազդարարման համակարգի ստեղծումը և պատրաստ վիճակի պահպանումը.

4) մարզի սահմանամերձ համայնքների բնակչության պատսպարման նպատակով թաքստոցների կառուցման պլանավորումը.

5) մարզի բնակչությանը պաշտպանական կառույցներին ամրագրումը.

6) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում պատրաստմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

7) մարզային մակարդակում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտում ճգնաժամային կառավարման գործընթացի ձևավորումը.

8) նախադպրոցական ուսումնական հաստատություններում աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանների ներդրման աշխատանքներին աջակցությունը:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության և ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունների և ենթակա կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախապատրաստման հիմնական ցուցումներն են՝ քաղաքացիական պաշտպանության համալիր գնահատմանը նախապատրաստումը:

6. Տեղական ինքնակառավարման մարմինների նախապատրաստման առաջարկվող ուղղություններն են՝

1) մինչև 2018 թվականի մայիսի 20-ը՝ ուժեղ երկրաշարժի դեպքում համայնքի գործողությունների պլանի ճշգրտումը.

2) համայնքի տարածքում հաշվառած հակաճառագայթային թաքստոցների և առկա պաշտպանական կառույցների ցանկի ճշգրտումը.

3) համայնքի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման միջոցառումների իրականացումը.

4) համայնքի բնակչության ազդարարման համակարգի ստեղծումը և պատրաստ վիճակի պահպանումը.

5) սահմանամերձ համայնքների բնակչության պատսպարման նպատակով թաքստոցների կառուցման պլանավորումը.

6) համայնքի տարածքում տեղակայված պաշտպանական կառույցներին ամրագրված բնակչության տեղեկացումը:

7) քաղաքացիական պաշտպանության պլանների և տարահանման պլանների ճշգրտումը (մշակումը).

8) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում պատրաստմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

9) աջակցությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանների ներդրման աշխատանքներին:

7. Կազմակերպությունների նախապատրաստման առաջարկվող ուղղություններն են՝

1) հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտների համար՝ արտակարգ իրավիճակի հնարավոր վտանգավոր ազդեցության գոտում բնակվող բնակչության ազդարարման համակարգի ստեղծումը.

2) քաղաքացիական պաշտպանության պլանների և տարահանման պլանների ճշգրտումը (մշակումը).

3) կազմակերպության աշխատակիցների պատսպարման միջոցառումների պլանավորումը.

4) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում պատրաստմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

III. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

8. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստմանն ողղված միջոցառումները պլանավորվում ու անցկացվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշման:

9. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների և Երևանի քաղաքապետարանի կողմից համապատասխան հիմնական միջոցառումների պլաններում ընդգրկված բոլոր միջոցառումների համար հստակ նշվում են անվանումները (թեմաները), կատարման ժամկետները, պատասխանատուները, կատարողները և մասնակիցները:

10. ՈՒսումնավարժությունների և վարժանքների պլանավորման ընթացքում նախատեսվող միջոցառումներն ուղղվում են կառավարման մարմինների և ուժերի տարբեր պատրաստականության աստիճանների բերմանը, արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև ռազմական գործողությունների վարման ընթացքում կամ այդ գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում բնակչության և նյութական արժեքների պաշտպանությանը, կառավարման մարմինների միջև փոխհամագործակցության իրականացմանը:

11. ՈՒսումնավարժությունների և վարժանքների թեմաները որոշվում են՝ ելնելով տարածաշրջանի, ինչպես նաև համապատասխան ոլորտի առանձնահատկություններից և առաջադրված խնդիրներից:

12. ՈՒսումնավարժությունների և վարժանքների անցկացման ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվում արտակարգ իրավիճակներում գործելու,

քաղաքացիական պաշտպանության պլանների և տարահանման պլանների իրատեսական լինելուն:

IV ՓՐԿԱՐԱՐ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

13. Փրկարար ուժերի պատրաստությանն ուղղված խնդիրներն են՝

1) ուժերի մշտական պատրաստականության ապահովումը.

2) մասնագիտական մակարդակի պահպանումը և բարձրացումը.

3) կինոլոգիական և պարաշյուտադեսանտային ծառայությունների զարգացումը.

4) մասնակցությունը փրկարարական գործի համար անհրաժեշտ միջոցների փորձարկմանը:

14. Փրկարար ուժերի և փրկարարների մշտական պատրաստականությունն ապահովվում է պարապմունքների, ուսումնամարզական հավաքների, հատուկ տակտիկական ուսումնավարժությունների և վերապատրաստման միջոցով, ինչպես նաև ուսումնավարժություններին և վարժանքներին նրանց ներգրավելու ճանապարհով:

15. Կազմակերպվում են փրկարար ուժերի և փրկարարների պարտադիր որակավորում: Փրկարար ուժերի և փրկարարների հերթական որակավորումն անցկացվում է երեք տարին մեկ անգամ:

16. Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների պատրաստմանն ուղղված խնդիրներ են՝

1) քաղաքացիական պաշտպանության կազմավորումների նախապատրաստումը, տեսական գիտելիքների բարձրացումը և մասնագիտական ունակությունների կատարելագործումը.

2) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության տարածքային ստորաբաժանումների կողմից մեթոդական օգնության ցուցաբերումը քաղաքացիական պաշտպանության կազմավորումների նախապատրաստման հարցերով.

3) քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ղեկավար կազմի և անձնակազմի ուսուցման գործընթացում գործնական պարապմունքների նախատեսումը և իրականացումը:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թ.
հոկտեմբերի 26-ի նիստի N 45
արձանագրային որոշման

ՊԼԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

ՀՀ ը/կ	Միջոցառումը և թեման	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Կատարողներ (մասնակիցներ)
1.	2.	3.	4.	5.
1.	Հիշատակի օրվան նվիրված համալիր ուսումնավարժության անցկացում	Դեկտեմբերի 7	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), կազմակերպություններ (համաձայնությամբ), ուսումնական հաստատություններ (համաձայնությամբ), բնակչություն
2.	«Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը և կազմակերպումը» թեմայով հրամանատարաշտաբային ուսումնավարժության անցկացում	Հունիս	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ պետական կառավարման մարմիններ և Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ ընդգրկելով նաև միջազգային մարդասիրական արձագանքման այլ կառույցներ

1.	2.	3.	4.	5.
3.	«Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչության զորահավաքային ծավալման կազմակերպումը և իրականացումը» թեմայով շտաբային ուսումնավարժության անցկացում	Մայիս	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններ (համաձայնությամբ)
4.	«Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի բնակչության և տարածքային պաշտպանության կազմակերպումը հակառակորդի հարձակման դեպքում» թեմայով շտաբային ուսումնավարժության անցկացում	Հունիս	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններ (համաձայնությամբ)
5.	«Արտակարգ իրավիճակների սպառնալիքի կամ առաջացման ժամանակ միևնույն կայազորի տարածքում տեղակայված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության և ՀՀ զինված ուժերի ստորաբաժանումների փոխգործակցության կազմակերպումը» թեմայով շտաբային ուսումնավարժության անցկացում	Նոյեմբեր	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ պաշտպանության նախարարություն	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության և ՀՀ զինված ուժերի ստորաբաժանումներ
6.	Փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարման նպատակով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների կազմում ստեղծված մշտական պատրաստության ստորաբաժանումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը	Մինչև հունիսի 20, մինչև դեկտեմբերի 20	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), կազմակերպություններ (համաձայնությամբ)

1.	2.	3.	4.	5.
7.	Հիմնական միջոցառումների պլանի հաստատում՝			

	1) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներին առնչվող հիմնական միջոցառումների 2019 թվականի պլանի հաստատում	Մինչև դեկտեմբերի 20-ը հաջորդ տարվա համար	ՀՀ պետական կառավարման համապատասխան հանրապետական մարմիններ	ՀՀ պետական կառավարման հանրապետական մարմիններ
	2) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման հիմնական միջոցառումների 2019 թվականի պլանի հաստատում	Մինչև դեկտեմբերի 20-ը հաջորդ տարվա համար	ՀՀ պետական կառավարման համապատասխան տարածքային մարմիններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	ՀՀ պետական կառավարման տարածքային մարմիններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)
8.	Սույն պլանով իրականացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում ՀՀ պետական կառավարման համապատասխան տարածքային մարմին	Մինչև նոյեմբերի 15-ը	ՀՀ տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններ (համաձայնությամբ), կազմակերպություններ (համաձայնությամբ)	ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), կազմակերպություններ (համաձայնությամբ)
	Սույն պլանով իրականացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	Մինչև դեկտեմբերի 1-ը	ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմիններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	ՀՀ պետական կառավարման մարմիններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)

1.	2.	3.	4.	5.
9.	Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների	Նոյեմբեր	ՀՀ արտակարգ	ՀՀ պետական

	բնակչության պատսպարման ապահովման հարցերի ուսումնասիրում, շահագրգիռ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու բարեգործական կազմակերպությունների հետ համատեղ թաքստոցների կառուցման պլանավորման և իրականացման ուղղությամբ աշխատանքների իրականացում		իրավիճակների նախարարություն	կառավարման մարմիններ, տեղական ինքնակառա-վարման համապատասխան մարմիններ, բարեգործական և շահագրգիռ կազմակերպություններ (համաձայնությամբ)
10.	«Հայաստանի Հանրապետության տարածքում պաշտպանական կառույցների ցանկը հաստատելու և դրանց պահպանությունը կազմակերպելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն	Մարտ	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններ (համաձայնությամբ) և կազմակերպություններ (համաձայնությամբ)
11.	Հայաստանի Հանրապետության տարածքում հաշվառած հակաճառագայթային թաքստոցների ցանկի ճշգրտում	Դեկտեմբեր	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակառա-վարման համապատասխան մարմիններ (համաձայնությամբ)
1.	Նախադպրոցական ուսումնական հաստատության աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանների ներդնում նախադպրոցական ուսումնական հաստատություններում	Հունիս	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ պետական կառավարման մարմիններ և Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)